**ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ N 1**
**N ԲՄԱՊՁԲ-7/39-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

**ք. Երևան** **20-ը օգոստոսի 2018թ.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և «Արցախ ԿԿ ԱՄ» ՓԲԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Դ. Մանուչարյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև Վաճառող, մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր՝ հիմք ընդունելով 28.06.2018թ. կնքված N ԲՄԱՊՁԲ-7/39-1 գնման Պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն փոփոխությունը (այսուհետև՝ Փոփոխություն) հետևյալի մասին.

**1. Փոփոխության առարկան**

1.1 Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին N ԲՄԱՊՁԲ-7/39-1 գնման պայմանագրի գնման և վճարման ժամանակացույցերում կատարել փոփոխություն ըստ հավելված N 1,2-ի:

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն Փոփոխությունն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն Փոփոխության մեջ չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ապրանքի հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերությունններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Փոփոխությունը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն փոփոխությանը կից Հավելված N 1,2-ը հանդիսանում են փոփոխության անբաժանելի մասը:

**3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 02522157
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական Միավորում» ՓԲԸ
ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Ա. Առաքելյանի 1
«Արդշինբանկ» ՓԲԸ, Էրեբունի մ/ճ
Հ/Հ 2472300596330010
ՀՎՀՀ 90018697
տնօրեն

Դ. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

Հավելված N 1

## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ՝ ՍՈՒՅՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ

| Հ/հ | Գնման առարկայի անվանումը | Չ/մ | Քանակը | Միավոր ի գինը (ՀՀ դրամ) | Ընդհանուր գումարը (ՀՀ դրամ) | Ապրանքների մատակարարումը 2018թ. ըստ ամիսների, ընդ որում՝ | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | մինչև դեկտեմբերի 10-ը |
| 1 | ճտքավոր կոշիկներ /Կոշիկ՝ ճտքավոր, յուֆտե/ | զ-գ | 40 000 | 10 820 | 432 800 000 | 10 000 | 15 000 | 5 000 | 10 000 |

**Ծանոթություն՝** մատակարարվող բոլոր ապրանքատեսակները պետք է լինեն նոր, չօգտագործված վիճակում և պետք է մատակարարվեն ՀՀ ՊՆ կենտրոնական իրային բազա (ք. Երևան, Արցախի 61) մատակարար կազմակերպության տրանսպորտով:

Հավելված N 2

## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ՝ ՍՈՒՅՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ

| Հ/հ | Ապրանքի անվանումը | Միասնական անվանացանկի CPV կոդը | Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ.-ին ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 15.12.2018թ., ընդ որում՝ | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր |
| 1 | ճտքավոր կոշիկներ /Կոշիկ՝ ճտքավոր, յուֆտե | 18811210/1/9/21 | 108 200 000 | 270 500 000 | 324 600 000 | 432 800 000 |

**Ծանոթություն՝** Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական Միավորում» ՓԲԸ |
| ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ | տնօրեն |
| Մ. ԴԱՄԲԱՐՅԱՆ | ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ |